

Եպիսկոպոսը գնաց զանգատաթուղթ գրեց շէյխի դեմ և սրա հետ նաև դատավճիռը մելիք Դավիթի ձեռքով ուղարկեց խանին:

Եվ երբ խանը կարդաց, եպիսկոպոսին կանչեց իր առջև, ստուգեց: Խանը բարկացավ, դաժան մարդիկ ուղարկեց, որպեսզի դատավորին բերեն հետիոտն և արագ: Գնացին բերին. կանգնեց խանի առջև: Խանը նրան ցույց տվեց եպիսկոպոսի դատավճիռը և հարցրեց՝ այս դո՞ւ ես գրել: Դատավորը պատասխանեց՝ այո՛: Ցույց տվեց եպիսկոպոսի աղերսագիրը և ասաց՝ այս ի՞նչ է: Շէյխն ասում է՝ ինձ սխալ իմացրին, հետո ճշմարտությունը իմացա: Խանն ասաց՝ կաշառքը իմացրեց քեզ ճշմարտությունը, որ դու քո օրինական վճիռը սխալ համարես: Այնտեղ պատահաբար գտնվեցին այն մարդկանցից, որոնք կնքել էին դատավճիռը և ասացին՝ մեր առջև գրվեց այդ դատավճիռը շատ հարցաքննությամբ: Խանը հարցնում է՝ սրան ի՞նչ պատասխան կտաս: Շէյխը լռեց և երեսի գույնը գցեց: Խանը բարկացավ, հրամայեց նրան թախտաբյուլահ անել՝ այսինքն՝ տախտակյա գդակ հագցնել: Բերին մի մեծ ու հաստ տախտակ և ծակելով անցկացրին շէյխի պարանոցը և տախտակից կախեցին բռժոժներ (փոքրիկ կլոր զանգակիկներ), զանգակներ, պուտուկի կանթեր, աղվեսների, շների պոչեր, սատկած կատուներ, անասունների չոր զանգեր, կանանց պատառոտված հին վարտիքներ, պարանը կապեցին պարանոցից և տվին մի ծեր մահմեդականի ձեռքը, որ առջևից գնար և պարանոցից քաշեր: Իսկ խանի ծառաները մտրակներով ու ճիպոտներով ծեծում էին ու կանչում բարձր, թե ով կաշառքով դատ է անում, նրա պատիժը այս է: Եվ բարձր ձայնով թուրքերեն կանչում էր՝ Հար քիմ դիվանդա ոշվաթ ալուր, ջաղասի բուդուր դը (ով ոք կաշառքով դատ է անում, պատիժը այս է): Եվ եպիսկոպոսին անվանեցին Դագիդեան (դատավոր կործանող): Իսկ շէյխին այսպիսի նախատիքներով շրջեցնում էին դիտելով ու դափով, սուլոցով: Շէյխությունը նրանից խլեցին և այդպես արհամարհված մնաց, որքան Թահմազ խանը կենդանի էր: Իսկ նրա սպանության մասին իր տեղում կպատմենք: Իսկ եպիսկոպոսը Փիլիպոս կաթողիկոսի հրամանով նշանակվեց Հուշիի սուրբ Սարգսի առաջնորդ, իսկ հետո հրաժարվեց, գնաց Օհանավանքի անապատը և այնտեղ մեռավ: Մենք նրանից սովորեցինք այս պատմությունը, չնայած մենք ևս աչքերով տեսանք:

**ԳԼՈՒԽ ԽԳ**  
**ԱՆՎԱՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Այն ժամանակ հին եպիսկոպոսներ կային, որոնք անվանի, լավ պարկեշտ ու սրբասեր էին. դրանք էին Փիլիպոսը, Հովհաննեսը և Մխիթարը: Ես կամենում եմ նրանց կյանքը առանձին-առանձին նկարագրել: Նախ Փիլիպոսին, որ քանաքեոցի էր և մեծ տոհմից, որ կոչվում էին Նուկղարենք. նրա ծննդյան անունը հենց Նուկղար էր: Սա մանկությունից պարկեշտ էր, մաքրաբերան (անպատշաճ բաներ չխոսող և չհայհոյող), պահեցող (պաս պահող), ծոմապահ, աղոթասեր, հրաժարված էր երեխայական խաղերից, միշտ գնում էր վանքերի դռները և ունկնդրում էր արեղաներին և լսում էր հոգևոր խոսքերը ու մտապահում: Այս պատճառով նրա ծնողները տեսան նրա այդպիսի ձգտումները, նրան տվին գյուղի վանքը ուսման, քանզի արդարամիտ էր և աշխատասեր, ուստի արագ սովորեց սաղմոս ու շարական և ժամակարգությունը անթերի: Առաքյալ կաթողիկոսը եկավ Քանաքեռի վանքը և տեսավ նրա պարկեշտ վարքը, նրան օրհնեց կուսակրոն քահանա (առանց ամուսնանալու իրավունքի) տասնվեց տարեկանում և անվանեց Փիլիպոս, որ թարգմանվում է ջահերի խոսք և ձեռքերի բերան\*: Այնպես պարկեշտ և առաքինի վարքով պատարագում էր Քրիստոսին: Մնալով վանքում և բնավ դուրս չէր գալիս վանքից, մինչև որ հայտնվեց երկրորդ Լուսավորիչը՝ Տաթևացի Մովսես վարդապետը: Փիլիպոսը գնաց հարեց նրան և շրջում էր նրա հետ, ուր էլ նա գնար: Նրանից չբաժանվեց մինչև Մովսեսը եղավ կաթողիկոս և Փիլիպոսին օրհնեց եպիսկոպոս և ուղարկեց Բջնու վանքը ղեկավարելու այն. նրան տվեցին նաև Քանաքեռը ի պատիվ նրա՝ ձեռագրով, որ քանի կենդանի է նա, պատկանի նրան, իսկ նրանից հետո Քանաքեռը պատկանի Քանաքեռի վանքին: Ահա այդ գրությունը գոյություն ունի:

Նա գնալով (Բջնու) վանքը, հավաքեց ավելի քան վեց միաբան: Նախ ուղղեց հոգևոր կարգերը, աղոթքների սահմանները, ապա

\* «Փիլիպոս» բուն նշանակում է ձիասեր: Այս բառը սխալ մեկնելով Յասմատուրքը գրում է. Փիլիպպոս, որ ասի բերան ձեռաց և բան ջահից: Նույնը կրկնում է Ջրր. սարկ., Ա 75: